



COVID-19-ի վերաբերյալ Ծանուցում Ավստրալիայում ապրող ժամանակավոր վիզա կրողների համար

4 ապրիլ 2020-ի դրությամբ

Ավստրալիայի կառավարությունը հայտարարել է փոփոխություններ ժամանակավոր վիզաների կարգադրությունների մեջ: Այս փոփոխությունները նպատակ ունեն պաշտպանելու մեր հանրության առողջությունը, ապահովելու աշխատանքի հնարավորությունները ավստրալացիների համար, աջակցելու խիստ կարևոր արդյունաբերությանը և օժանդակելու հետվիրուսային շրջանի արագ վերականգնմանը:

Ավստրալիայում ապրող վիզա կրողները պետք է հետևեն հանրային առողջապահության հանձնարարությանը COVID-19 հետ կապված:

Արձակուրդային աշխատանքի վիզա կրողներ

Արձակուրդային աշխատանքի վիզաները (Working Holiday Maker visas) աջակցում են առողջապահության, տարեցների և հաշմանդամների խնամքի, գյուղատնտեսության և մթերամշակման և երեխաների խնամքի խիստ կարևոր ոլորտներին:

- Եթե դուք Արձակուրդային աշխատանքի վիզա կրող եք և աշխատում եք այս խիստ կարևոր ոլորտներից որևէ մեկում, դուք կազատվեք մեկ գործատուի հետ վեց ամսյա աշխատանքի սահմանափակումից և նաև իրավունք կունենաք դիմելու հետագա վիզայի համար՝ շարունակելու աշխատել այս ոլորտներում, եթե ձեր ներկա վիզայի ժամկետը լրանում է հաջորդ վեց ամսվա ընթացքում:

Եթե դուք Արձակուրդային աշխատանքի վիզա կրող եք և անկարող եք հոգալ ձեր կարիքները, դուք պետք է կազմակերպեք վերադառնալ տուն:

Մեզոնային աշխատողներ

Մեզոնային աշխատանքի ծրագրի (Seasonal Worker Program) և Փասիֆիքի աշխատանքի ծրագրի (Pacific Labour scheme) մեջ ընդգրկված աշխատողները, կարող են երկարացնել իրենց մնալը Ավստրալիայում՝ աջակցելու գյուղատնտեսության ոլորտին:

Եթե դուք Ավստրալիայում եք և մասնակցում եք Մեզոնային աշխատանքի ծրագրին, դուք կարող եք դիմել Ժամանակավոր գործունեության (Ենթադաս 408) վիզա (Temporary Activity visa (subclass 408) ստանալու համար՝ Ավստրալիայի Կառավարության Հաստատված Միջոցառման (Australian Government Endorsed Event) հոսքի շրջանակում: Փասիֆիքի աշխատանքի ծրագրի աշխատողները կարող են դիմել նոր Ժամանակավոր աշխատանքի (Միջազգային հարաբերություններ) (Ենթադաս 403) (Temporary Work (subclass 403) վիզա ստանալու համար՝ Փասիֆիքի աշխատանքի ծրագրի հոսքի շրջանակում:

Այցելության վիզա կրողներ

Եթե դուք Ավստրալիայում եք և ունեք Ացելության վիզա (Visitor visa) և չեք կարող հոգալ ձեր կարիքները, ապա դուք պետք է վերադառնաք տուն, եթե հնարավոր է:

Միջազգային ուսանողներ

Միջազգային ուսանողներին քաջալերվում է, որպեսզի ապավինեն իրենց ընտանիքների աջակցությանը, կես դրույքով աշխատանքին, եթե հնարավոր է, և իրենց անձնական խնայողություններին՝ հոգալու իրենց կարիքները Ավստրալիայում: Որոշ հանգամանքներում ուսանողները կարող են օգտվել իրենց ավստրալական կենսաթոշակից:

Կառավարությունը նաև հարմարվողականություն կորսնորի ուսանողական վիզայի պայմանների նկատմամբ՝ հաշվի առնելով, եթե կորոնավիրուսը խանգարել է տվյալ պայմանի բավարարումը:

Հմտությունների ժամանակավոր վիզա կրողներ

Եթե դուք ունեք Հմտությունների պակասի ժամանակավոր վիզա (Temporary Skill Shortage visa) և մնացել եք առանց աշխատանքի, բայց աշխատանքից չեք ազատված, դուք կպահպանեք ձեր վիզայի վավերականությունը, և ընկերությունները հնարավորություն կունենան երկարացնել ձեր վիզան սովորական պայմանավորվածությամբ: Կառավարությունը նաև կթույլատրի ձեզ օգտվել ձեր կենսաթոշակից մինչև \$10,000՝ ձեր կարիքները հոգալու համար:

Ընկերությունները կարող են նաև կրճատել ձեր ժամերը՝ առանց ձեր կամ ձեր գործատուի կողմից վիզայի պայմանների կամ պարտավորությունների խախտման:

Եթե դուք հեռացվել եք աշխատանքից կամ անգործ եք, դուք պետք է գտնեք այլ գործատու 60 օրվա ընթացքում կամ պատրաստվեք մեկնել Ավստրալիայից, եթե հնարավոր է:

Այս ժամանակավոր կարգադրությունների վերաբերյալ հավելյալ տեղեկատվությունը հասանելի է նախարարության կայքում՝ <https://covid19.homeaffairs.gov.au/>: